

ՊԱՏՄԱԿԱՆ

ԼՍՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՇԱԿԻՔ:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԼԱՏԻՆԱՏԻՈՑ

ՅԵՐՈՒՍԱԴԵՄ.

(Ծ-Բ-Ն-Դ-Ե-Զ Է-Բ-Դ)

Գ.Լ. ՄԵՏԵՍԱՆԵՐՐՈՐԴ

ԽԱՇԱԿԻՔ-ԵՒ ՄԱՍԿԻՔ-ԵՒ ԼԱՏԻՆԱՏԻՈՑ

ԺԱՊԵՐԵՄ ԲԱՇԱԿԻՔ ԵՒ ԲԱՇԱԿԻՔ

ԷՆԴԵՐ ԷՆԴԵՐ:

Եւրոպայի լուսատուութեան նախաշաղկիդ եղին ընդհանրապէս խաչակիրք: Քրիստոսի զինուորը ուղեւորվում էին յայնպիսի երկիրս, ուր ընկերական փնտրումները դարձան, ուր գիտութեանը եւ գրականութեան զիւր յարակցեալ էին եւ ուր բազմազան նորանոր ծանօթութիւնը եւ գիտք ներկայանում էին իւրեանց աչաց առաջին:

Թէ եւ համեմատաբար նախկին Հելլենական դրականութեան, այդ դարու Բիզանդեան մատենադրութիւնն իրատ աղաւաղեալ երեւայ մեզ, սակայն այդու ամենայնիւ զուր է համարում այն ժամանակուայ արեւմտեան ազանց գիտութեանը: Եւ եթէ բարի ճաշակն կրթութեամբ եւ գիտութեամբ լուսաւորեալ մի մասը զազգայութիւնն է, ցունաց ճաշակն թէ եւ ապականեալ սուտ հմտութեան տրդիւնաբերութեամբ, սակայն ընծայում էր զեւ մի բազմաբեղուն կրթութիւն Լատինացւոց աղիտութեան: Կ. Պոլսի բաղաքն, որ հանդիսն Հռոմայ չէր ենթարկուած խաժաղութ ազդեաց աւերմանց, ճոխ էր հոյակապ արուեստիւր. միայն այդ շրջութիւնը կարող էր խաչակրաց մէջ ազդել մի ցանկութիւն տանել Ինչպե՛ս իւրեանց մի մասն յայդ հրաշակերտաց եւ ծանօթութիւն տալ իւրեանց հայրենակցաց հնարագիտութեանց եւ արուեստից արգաստորած մի բաղքը կենաց ճաշակն: Երկրագործութիւնն, ճեղակերպն, արուեստն, վաճառականութիւնն եւ գիտութիւնն յառաջադիմեցան այն հաղորդակցութեամբ, որ ունէր արեւմուտն արեւելքի հետ: Կուսութեան աղիւնը, որը ի վարժեաւս Արարաց էին ջաբել զիտութեանց կամն, Լատին ասպետաց՝

որը միայն իւրեանց ազգակիրքն զիտէին, հայնայնեցին մի հոյ նորանոր գիտք: Այսպէս արեւմտեայ իւրեանց հաղորդակցութեամբ ընդ Արարացի ծանօթացան այն ճարտարագիտութեան, որին Խաչակիր գիտական անուամբ են յորջորջել, զի այնպէս կոչէին ինչ որ չէր վերաբերում կրթական հրեւմութեան: Մեր ժամանակակից մի երեւելի Գերմանացի Լեյնհար, յիշուեալ տարի յառաջ, ուրանոր զեւ երկուստարդ էր, հիշեալ մի գիտի վերայ՝ զոր կարծէր թէ արել է (), յայտնեց իւր հայրենակցաց, որ այն ճարտարագործութիւնս Տեւտոնական ազանց մի հնարագիտութիւնն է. սոյն կորովափառ անձս, անշուշտ անդատն երկար ժամանակէն ի վեր ճանաչել է իւր երկրատարգումեան սխալներն, ոտկայն եւ այնպէս յարաժամ լուսմեք խօսք Գերմանական ճարտարագիտութեան վերայ կարող ենք մի եւ նոյն հիմնաւորութեամբ կոչել եւ Գաղղիական, Սեղգիական, Արմատիական ճարտարագիտութիւնը, սակայն անուրանալի է, որ Գերմանացիք զարգացած են յայդ արուեստի: Սերապիոսի, Ֆրիդրիքի, Կոլոնի եւ Վէննայի մայր եկեղեցիքն վկայ են հանդիսանում՝ սեղ:

Սակաւիկ մի պարզելու համար խաչակրաց հետեւներն. բաժանեմք նոցա յանմիջականու եւ ի հետաւորս՝ համար յառաջնոց բարի կամ գոնէ անտարբեր՝ իսկ ոմանք չար էին: Օգտուէտ հետեւներն կարեն զատուիլ ի հետեւեալ կարգս - զարգացումն թագաւորական իշխանութեան, հաստատումն աշխուականութեան կարգաւորութեան, յառաջադիմութիւն վաճառականութեան, ծագումն համայնից եւ Տիւր Էտայի (այսինքն երրորդ կարգի մարդկան ի Գաղղիա յետ վիճակաւորաց - հոգեւորականաց - եւ աշխուականաց), ծագումն ազատ շինականաց դասի ճորտերի ազատութեամբ:

Չ-Բ-Դ-Ե-Զ Է-Բ-Դ-Ե-Զ Է-Բ-Դ-Ե-Զ:

4° Խաչակիրք ոչ սակաւ նպաստատու էին արքայական իշխանութեան հաստատութեան, եթէ թագաւորը օգուտ բաղէին միացնել պարապ մտացեալ վիճակքը ընտանեաց սպառմամբ, որոց վերջին շտաւիղն կորնչում էին Սք. Երկրում. բանգի ի Գերման

(4) Այս ինքն էր ինչ որ Տեւտոնական ճարտարագիտի գերեզմանն, որ կառուցել է Սերապիոսի Մայր Եկեղեցին:

Վենետիկի, Գենուայի եւ Պիզայի հանրապետութիւնքն տանուէին խաչակիրքը իւրեանց նաւօր յերկիրն — սուրբ, եւ մինչդեռ բարի ասպետք վառեալ կրօնական եռանդիւ վառնուէին իւրեանց սերնդոց ժառանգութիւնքն Աւորք — Գիւրգ մանն յափշտակելոյ համար Մահմետականաց նախատանքից, հանրապետական վաճառականք անդորրաբար հաշվուէին իւրեանց օգուտքն, որ այդ Ֆանատիկ բարեպաշտ ուխտաւորքն մեծ գնով հայթայթէին իւրեանց նաւարկութեան պատճառաւ: Հոցա նաւատորմիւրն շարունակաբար երթեւեկէին Եւրոպա եւ յԱսիա տանելով խաչակրաց ուտեստ եւ պարէն մանուանդ երբ անհրաժեշտ կարեաց նուազութիւն կար Գուզաղի մէջ, վասն զի յայնժամ կրկնապատիկ գնով վաճառէին: Այդ նաւատորմիւրք բերէին յարեւելից մետաքսեայ կերպար, համեմք եւ այլ վաճառք, յորոց պակասէին յարեւմուտս: Գաղղիոյ ծովագերեայ քաղաքը հետեւեցին զոցա օրինակին՝ յօրէ անտի հաստատեցին արեւելեան կոչեցեալ վաճառականութիւնն, որ եղեւ մին ի գլխաւոր աղբիւրց հարստութեան Գաղղիոյ՝ կարէ եւ երկիւղ ազդել այդ արեւելեան կողմանց որ եւ իցէ քաղաքական փոփոխութեանց համար, յորոց պիտի ծաղէր ի միում մասանց այդ գաւառաց մի հզօրագոյն իշխանութիւն:

Բաղմադան ազգոց ընդհանուր դործունէութեան մէջ Գերմանացիք սարսալ չմնացին: Ֆրամանք, Ֆրիզօնք, քնակիւք Լուրէքի եւ Բրէմիոյ յարդ արեւելեալով նաւատորմիւրք ունէին թէ խաչակրաց եւ թէ վաճառաց մասն, որ անտի բերէին ի գաւառս Հիւսիսոյ ի Վիսթի եւ ի հօվորթօղ:

Յ-Ի-Ն Հ-Բ-Ն-Է

4° • Համայնից ծագումն խաչակրութեան ամենաօգտաւէտ հետեւեանց մինն եղեւ. արուեստից յառաջագիմութիւնքն եւ վնասակատաց պաշտպանութիւնն եւ զգուշութիւնն ի կարգ ածել ուստական վարչութեան շփոթութիւնքն՝ քաղաքաց ծաղկման պատճառ եղին:

Իսկ յայնժամ քաղաքաց քնակիւքն եթէ չէին կղերական կամ աղնուական դասից, ոչ մի քաղաքական ազատութիւն չէին վայելում թող թէ քաղաքադիտական, զի տասներորդ դարում հազիւ մարդկային միաբն ըմբռնուէր մի այնպիսի իրաց վիճակ, որին բնաւ կարողանային մասնակցել թէ իւրեանց

երկրի կառավարութեան եւ թէ իւրեանց բնակեալ քաղաքի մէջ: Այս քաղաքացոց կեանքն յար եւ նման էր աղաքական շինականաց վիճակին. նոցա կառավարողն էին ժառանգական կոմսք, որք մի անասման իշխանութիւն վարէին: Այն կարգիս մէջ եղեալ փոփոխութիւնն խաչակրութեան արդիւնաբերութեանց մինն եղեւ կոմսից բացակայութեան պատճառաւ, յորում ժամանակի քաղաքք պատենի տալիս զիտեցին թօթափել իւրեանց լուծն:

Ի զոցանէ առաջինը եղին Լուդարաիոյ քաղաքքն, որք փարթամացած էին վաճառականութեամբ ի բուկարան երկրոտասաներորդ դարու: Բնակիւք կազմեցին քաղաքապետական ընկերութիւնք կաշիւով Համայնք (1), որոց զօրութեամբ մի հանրապետական վարչութիւն ընծեւեցին իւրեանց: Ամենահզօրքն ի նոցանէ վստահանալով իւրեանց քաղամարդութեան վերայ դրուեցին այդ իրաւունքը, այլ ընդունեցին այդ շնորհը միայն ահագին գումարաց միջոցաւ: Թօթափելով կոմսերի իշխանութեանց կամ պայտերական դատաւորաց լուծն կարգեցին իւրեանց համար հատարակաց դատաւորք՝ կամ Հիւպատոսք եւ հաստատեցին ազատ կառավարութիւնք, սակայն ճոճալով միայն պայտեր հեղինակութիւնն. եւ առ ի պաշտպանութիւն իւրեանց ազատութեան սահմանեցին քաղաքացի զինուորաց դաս: Հուն մի ժամանակէն զկնի ընդատրամանելով իւրեանց անկախութիւնքն՝ մինչ անգամ սկսան նիզակակիցք լինել, պատերազմ մղել եւ դաշինս խաղաղութեան կոել:

Գենուայի, Լուկքայի եւ Պիզայի ծովական քաղաքքն սրանձացեալ իւրեանց դրից եւ հպարտացեալ իւրեանց հարստութեանց ազագաւ, առաջինքն եղին իսկ հանրապետական կառավարութեան ձեւ ստացողք: Ինքն չենք կարգում Վինէտիկ ի շարս զոցա. սոյն քաղաքս թէ եւ գրեթէ վերաբերեալ Իտալիոյ, համա-

(1) Հայ Թարգմանիչ Կոմիտէ բառն Համայնքի Թարգմանիչ են. թէ եւ մտադիր չենք ասել թէ այդ Թարգմանութիւնը սխալ է. ըստ որում մեզանից առաւել ներհուն Թարգմանիչք զայդ ընդունել են (որոց եւ մեր սկսբաւոր ենք հետեւել), կոմենտներք յայտնել միայն որ արդի մի այլ Հայ գրիչ Կոմիտէ բառն Հասարակարգի է վերածել, որ ըստ մեզ աւելի յարմար է միա յընելով Կոմիտէ բառի իսկ նշանակութեան. յոյց ընդհանուրն մասնաւորից զօրեղ քննելով առ այժմ ոչինչ չենք կարող յայտնել նայեցեալ որ շատ այդպիսի բառեր, որոց Թարգմանութիւնն անթիշ է, ընդունուած են եւ որ միայն ազգի բոլոր գիտնականաց ընդհանրութեամբ կարեն ուղղուիլ:

բուած էր որպէս մասն Հեղինական (՝) կայսրութեան: Զետեղեալ դոյով ի ծովալիճս Վէնէսիոյ եւ չժառանգելով անդամ մի մատնաշափ երկիր ի ցամաքի, նա պարտաւոր էր իւր ազատութիւնն ոչ թէ յափշտակեալ կամ դնեալ տիրոջոցս՝ բայց իւր հիմնարկուաց հըրժարման՝ որ նախամեծար էին համարել զչքաւորութիւնն եւ անկախութիւնն քան իւրեանց կայից պահպանողութիւնն: Սակայն մեր նպատակն չլինելով աստ քննել Վենէտիկոյ ծագումն եւ յառաջագլիժութիւնքն, վերադառնանք մեր պատմութեան:

Պենուայի, Լուկայի եւ Պիզայի օրինակին հետեւելին եւ Միլան, Պադի, Լոդի, Աստի, որ միջին դարու հոգոր քաղաքներէն էր: Կրէմոն, Կոմ, Պարմա, Պլէզանս, Վէրոն, Պադու, Վիտանս, Գրէվիլ եւ Լոմբարդիոյ այլ քաղաքքն, քանզի Կայսերական իշխանութիւնն երկարօրէն յարատեւեց ի Տոսկան եւ ի Իտալիա: Հազիւ այս քաղաքքս ազատ տեսին զինքեանս՝ որ կամեցան տիրապետութիւն ձեռք ձգել. զրաւելով ազնուականաց զգեակքն եւ առանքն, բռնադատեցին կալուածատեարց դասիլ ի դասս քաղաքացւոց եւ հընադանդիլ իւրեանց յօրինեալ քաղաքապետական վարչութեան: Յայնմհ աէ ձեռն արկին նուաճել զրացի ազգերը, որք հանդոյն իւրեանց կամեցել էին թօթափել զերազոյն իշխանութեան լուծն. յաւելլով ի դէպ է՝ զի առ ի չգոյէ որատերազմաց՝ իւրեանց զէնքն զդարձընէին ընդդէմ իւրեանց, քանզի կուսակցութեանց ժանտախտն սարդել էր ընդ ազատութեան այս հանրապետութեանց մէջ եւ իւրաքանչիւր Համայնք բաժանուած էր յերկուս կամ յերիս կուսակցութիւնս. որք իւրեանց սերնդոց ժառանգութիւն կիողելին այն կատաղութիւնն, որով ինքեանք վառաւոր էին: Ամեն կուսակցութիւն փոխադարձաբար տիրապետութիւն իւր յաղթութեամբ ջնջումէր ակախութեանց ընտանիքն, աւերումէր նոցա ազարանքն, որոց մեծ մասն պարտք էին, եւ երբ հառանէր հարստահաւեալ կուսակցութեան ժամանակն տիրապետել քաղաքին՝ յաղթեցոց հետ մի եւ նոյն չափաւորութեամբ էր վարվում, որով նորա վարուել էին: Այսպէս տակաւ իւրաքանչիւր քաղաքի ընչատեարց մի մասն պատկերով խտալիս շնչումէր եւ արտադրումէր պատակոման հուրն. հազիւ թէ մի թաղ բարձրանումէր իւր անխնից, որ ահա ներկայանումէին նորա՝ որք պիտի փոխադարձաբար աւերէին զայլս:

Միջին դարու Իտալական հանրապետութեանց նրկարադրութիւնն համառօտեցիմք. ապացոյց իւր ճըշգրտութեան վկայ է մեզ այս հանրապետութեանց զրուատիչ, հանճարեղ եւ հնարագիտ պատմաբան Սիմոն Երմոնդի:

Զինի քարութեանց բազմիցս փոխանակին չարիք, թէ եւ քարեաց արդասիրն քարեբաստ համարուն եւ թէ յառաջընթացք են, ուստի աներկբայաբար իրաց ոյց վիճակում են դաւանուել համայնից հաստատութիւնքն. որոց պարտաւոր եմք մեր կրթութիւնքն, հայրական կառավարութիւնքն, հետադիտութիւնքն եւ լուսաւորութիւնքն: Սոյն շահուէտ յնդափոխութիւնս ի Պադովիա՝ եղեւ առանց չարաբաստիկ հետեւանաց, 1408 թուին Լուի Յոյր՝ առաջին թագաւորն եղեւ իւր հպատակաց քաղաքապետական վարչութեան իրաւունք ընձեռողն: Եւ զհ հետեւան ազնուականութիւնն մի լու առիթ դտաւ հայնայնել իւրեան զբամապլուի, Իտալիոյ ծովային հանրապետութեանց եւ Սուրբ-Երկրի անհուսափց տանելու. հետեւաբար եւ ինքեանք փութացին վաճառել զոյնօրինակ առանձնաշնորհք իւրեանց իշխանութեան քաղաքաց, որով ի վախճան երեքտասաներորդ դարու ոչ մնար ի Պադովիա մի քաղաք, որ չվայելէր որ եւ իցէ՝ քաղաքապետական վարչութիւն:

Ի Գերմանիա սոյն օգտուէտ յնդափոխութիւնս աւկալի մի անազան երկւան եղեւ՝ թէպէտ եւ առաւել ընդարձակաբար: Կայսեր անմիջական հպատակ բազարք տակաւ առ տակաւ ընդունեցին մի հոյլ առանձնաշնորհք հաւատար այն դունակ անկախութեան, զոր իրաւագրական ոճիւ յորջորջվումէ quasi souveraineté կէս իշխանութիւն կամ supériorité territoriale կալուածական իշխանութիւն (մեծութիւն), որ դուքս, կոմս, մարգրաւ, հարուստ, (synaste) եպիսկոպոս, արքայք եւ այլ անմիջական հպատակք զբաւեալ տիրերին իւրեանց կալուածոց մէջ: Անդղիա եւ այլ պետութիւնք հետեւելցին Իտալիոյ, Պադովիոյ եւ Գերմանիոյ հաստատելով համայնութիւնն:

Եւ ինչ որ ընդ միջին դարու Իտալական հանրապետութեանց մասին խոսելու համար անհրաժեշտ էր խոսելու մասին, այն է՝

5° Հորտաց արձակումն համայնից հաստատութեան ընական պատճառներից միմն եղեւ. թագաւորք հետեւելով քաղաքականութեան՝ օրինակն տուին, իսկ ա-

բայ արդի ամենայնի հռովմէական օրէնսդրութիւնն կար-
գուածն մի այնպիսի ժողովրդեան համար, որ հաստեղ
էր ի ծայր լուսաւորութեան եւ որոյ առաջեւ հա-
րապիտութիւնն եւ վաճառականութիւնն բացեալ էին
խուսք մի ընկերական իրաւաւորութիւնը, որպէս եւ ի-
րաւադէտք՝ բազմազան եւ խմտտուն դատաստանը,
ձեւտոնական ազանց պարզութեան չէր յարմարում:
Եւ զիսոր կարելի էր ի ներդաշնակութիւն ածել աւա-
տական օրինաց հետ, որ էր նոյաւ բոլոր կարգադրու-
թեանց ողին: Չնայեցեալ այդ հանգամանաց՝ թողին
մնալ թէրգոտական կողմ համարելով որպէս օգնական
օրէնք բոլոր քաղաքական գործոց մէջ, որը զեւ չէին
կարգադրեալը իրենանց յատուկ օրինօք, նոյնպէս եւ
Յուստինեան կողմ որ, մտեալ էր միջին եւ ներքին յա-
տալիոյ մէջ՝ ունեցաւ անդ փոքր ի շատէ տալաւորու-
թիւն: Պիզանի քաղաքացիք, որք էին նիզակակիցք կամ
Վատայր Լոմբէ Բ. կայսեր առնելով զՎալմֆի ի 1457ին
դտին մի հռչակաւոր ձեռագիր յօրինադրաց կամ ի
պառնկեկաց Յուստինիանոսի, որ այսօր գտանի ի Յը-
լօրանս ի զնին հանդիսականաց՝ պատմեն թէ Լո-
մբէր ընթեռնելով այդ մատենադ հրամայեց որ, յայնմ
հետէ հռովմէական օրէնքն միայն ընդունին ի դա-
տաստանատունս Իտալիոյ եւ Գերմանիոյ եւ ուսու-
ցանեն ի վարժեսրս՝ այդ է մի սխալմբ, որ հաւա-
նականաբար, որպէս բոլոր վէպքն կցորդէ ընդ իրա-
կանութեան: Հռովմէական իրաւանց վերանորոգու-
թիւնն լուսաւորութեան յառաջադիմութեանց միւնն ե-
ղեւ որ յարդարելով մարդկանց իղէաներն քաղաքա-
կան ընկերութեան յատկանիշաց եւ բնութեան վերայ
նախապատրաստել էր նոցա մի կատարելագործեալ
ժողովրդեան օրէնսդրութիւն ընդունել: Այդ յեղա-
փոխութեան իրաւագիտութիւնն առաջին անգամ Կր-
նէրիոսն *) սկսաւ ուսուցանել ի 1410ին ի համա-
լսարանն Բոլոնի, որ իւր հայրենիքն էր: Երկուտա-
սաներորդ դարու երիտասարդութիւնն մեծ եռանդիւ
ձեւեարկեց այդ նոր գիտութեան յերապիոյ աշու-
կիւրք յաճախելն ի Բոլոնի ուսանել. ի դարձին ի
հայրենիս իրենանց այդ իրաւադէտք ի կիր արկին
Հռովմէական իրաւագիտութիւնն զմեկ ի պիտաւոր
պետութիւնս որպէս օժանդակ օրէնք: Եւ իրաւագի-

տութիւնն մուտ դտաւ յԱնգղիա ի ձեռն Բօճէրի եւ
ի Գաղղիա ձեռամբ ումեմն մականտանելոյն Ոթոն
Ջրօտամտց. սա երաց ի Մօնտպէլիէ ի 1466 ամի ա-
ռաջին իրաւագիտական դպրոցն:
Եւրոպական լուսաւորութիւնն մի մեծ քայլ արաւ
Հռովմէական իրաւագիտութիւնն ընդունելով:— Հա-
նապարհ յօրինեց՝ գեղեցիկ դպրութեանց վերանորո-
գելուն: Այլ թէ միայն համայն պետութեանց օրէնս-
դրութիւնն եւ սահմանադրութիւնն շահվեցան շնոր-
հիւ իրաւագիտութեան հասարակաց վարչութեան բո-
լոր ծիւղերի մէջ մտցրած կարգին եւ եղանակին, որ-
պէս եւ Որդալեանց (փորձ անմեղութեան միջին դա-
րում) եւ միջին դարու այլ խուժաղժական սովորու-
թեանց եղծմամբ, այլ եւս առաւել նոր դպրութիւնն
որ, Հռովմէական օրէնքն պահանջէր, պատճառեց հա-
զարեակ առիթներ մարդկային մտաց զարգացման: Հան-
գամանաց կիրառութիւնն նոր սխալեմայի մէջ մշա-
կեց դատօրութիւնը այս օրինաց դպրութիւնն զգացնել
տուալ զէթ արծաթեղէն դարու Լ. Ինիսական լեզուի
կարելորութիւնն եւ մի դաս զաղափար պարգեւեց:
Անհրաժեշտ երեւաց իրաւագիտաց վերադառնալ դէպ
ի կլասիկական հմութիւնն նոցա բոլոր մասանց մէջ:
Իրենանց ճաշկան համակացաւ, իրենանց տաւացումքն
յառաջեց զարգացման ասպարիզում ճշգրտութեան,
յատկութեան եւ վաշխութեան կողմէն: Հռովմէա-
կան օրէնքն ուսոյց որոշել կարելորադոյնն անկարե-
ւորագունից, օգտաւէտ՝ վնասակարից՝ զբաղուելով
այս իրաւագիտութեան, մարդ չէ կարողանալ պահել
իւր զարմանքն տրամաբանութեան հնարադիտութեանց
նամրութեան վերայ: Սովորելով մարառել ազատա-
բար եւ հաստատ զէնքով իրաւագէտն չէր կարողա-
նաւ յարմարիլ սկզբաստիկական նաւրք վիճից հետ,
որ մի եւ նոյն թուականում այնքան ընդունելութիւն
էր գտել, եւ ներել է մեզ հաւատալ որ, հռովմէա-
կան օրէնքն եղեւ մի ընտիր ուղղիլ մարդկութեան
բռնած խարտախի վարչութեան, որքան որ իրաւա-
գէտք պարապեցին նորա աղբերօք:

ՍԷՆԷԿԱՆ ԻՆԴԵՆՏԻԿԱՆ ԻՆԴԵՆՏԻԿԱՆ

29 Հռովմէական օրինաց մուտքն ծագումն տուաւ
կանոնական օրինաց, սոցա ստեղծողք եղին Պապե-
րին՝ նոր իրաւագիտութեան ընթացիլ առաջն առ-
նելոյ համար, իսկն զի նա (իրաւագիտութիւնն) աշ-

(*) Չէր նա Գերմանացի, որպէս երկար ժամանակ կապեալ
են յեղեալ իւր անուան վերայ:

խարհական իշխանութիւնը բարձրացնում էր առանց տիրապետական հոգւոյ ազդեցութեան: Գրատիէնի ԳԷՂԵՄԻ (հրովարտակ) եւ Գրիգոր Թ. Պապի ԳԷՂԵՄԻ (օրէնսդրութիւնը) հակասական էին հռոմէական իրաւանց տարերց, սակայն շնորհակալութիւն մատուցանեմ Պապերի օրէնսդրութեանց, որը ի չիք դարձուցին Աստուծոյ դատաստանն *):

Մետոքական միտքն որ, թագաւորութ էր պապերի իրաւագիտութեանց մէջ, զգացնել տուեց կարգի պիտանաւորութիւնն ի միւս օրէնսդրութիւնս. աւատական հաւատն, որ հիմնաւորուած էր սովորութեան վերայ՝ փոխուեց Սլատէմայի ձեռամբ Հագոյիմուսի՝ որ ժամանակակից իրաւագէտ էր Ֆրէտէրիկ Ա. կայսեր եւ որ համարվում է հեղինակ կամ խմբագրող կալուածական երկու գրեանց՝ որ Յուստինեան օրինաց ժողովածոյի ետեւ է գտանվում:

Որովհետեւ իրաւագիտութիւնն դարձեալ էր պիտութիւն պահանջող մի ուսում, հետեւաբար չէր կրօրող վարուել զինուոց յետազոտութեան հետ, որն յայնժամ ազնուականութեան միայն ծանօթ գիտութիւնն էր. ուստի զինւորութեան որեւորք հարկադրուեցան թողուլ այն ալիարարութեան ընթացքն, որոյ բաւական չէին միայն խիղճն եւ մի քանի սովորութեանց վերայ ճանաչողութիւն ունենալն: Մարդկութեան մի նոր դաս երեւան եղեւ լրնկերութեան, այն է՝ իրաւագիտաց դասն, որոյ ազդեցութիւնն սատար եղեւ սանձահարել ազնուականաց հօգոր իշխանութիւնըն:

ՍԷՂԵՄԻ ԷՄԻՆԵՆՏԻ

5^օ Համալսարանաց հաստատութիւնէն առաջ, հասարակաց ուսումնարանքն կցեալք ընդ մայր եւ զրպրոցական եկեղեցիս եւ ընդ վանօրայս, որպէս եւ ի Հռոմ, ի Փարիզ, յԱմսթեր, յՍթաֆոր եւ ի Վալամանկ հաստատեալ Ակադէմիայքն ուսուցանէին միայն ազատական եօթ արուեստքն, որք են՝ — տրիվիում կամ Քերականութիւն, Հռետորականութիւն եւ տրամուրաց

նութիւն, ֆուստիում կամ Թուարանութիւն, Երկրաչափութիւն, Երաժշտութիւն եւ Աստղագիտութիւն: Աստուածաբանութիւնն եւ իրաւագիտութիւնն զեռակաղեմական գիտութիւնք չէին, միայն ի Մալէրն ուսուցանէին բժշկականութիւն:

Ամենահին՝ Մալէրնի, Բուլոյնի եւ Փարիզի համալսարանքն են այս հաստատութիւնքս չրժադեցան կառավարութեան ձեռամբ. ըստ ինքեանց կամ ըստ յեղակարծ գիտուածոց ծագումն առին. մի հուշակատոր ուսուցիչ հաստատում էր իւր բնարականն մի քաղաքում եւ կանգնում էր մի ամպիոն. հետաքրքրութիւնն յանկուցանում էր անդ մի քանի ունկնկիրք, իւր ճարտարախօսութիւնն բազմացնում էր թիւն եւ որքան աճում էր իւր համբաւն, այնքան աշակերտք յաճախում էին ընդ ամենայն տեղիաց որոց բազմութեան առթիւ այլ ուսուցիչք հարկադրում էին հաստատիլ առ ետեղ. այսպիսեօր ուսումն յարակայում էր: Ժամանակի հանձարն նպաստաւոր էր ընկերակցութեանց եւ բնական էր, որ մի քաղաքում գիտութեանց պատճառաւ ժողովեալ անձինք ընդունելով ընդհանրական սովորութիւնն՝ կազմէին մասնաւոր ընկերակցութիւնք, որք ունենային իւրեանց սահմանն եւ կարգն: Եւ քանզի մատենար գիւղնապիւտք էին՝ բերանացի վարդապետութեամբ միայն միջոց էր ներկայանում ուսման հետամտիլ. վիճակաւ ուսանողք վայելէին այնպիսի մի յարգանք, որ այսօր հմուտութիւն եւ վարդապետութիւնն զժուարաւ կարողանում են ձեռք բերել: Աւուցչաց յարգանքն զիզում էր եւ ուսանողաց վերայ. ի մէջ սոցա տեսանելի էր հասակաւոր անձինք, պատուաւոր եւ պաշտօնատար մարդիկ: Երիտասարդք անգամ որք մարդէին ի զիտութիւնս, արդի ժամանակից առաւել տարիք իզոհէին:

Առաջին հիմնադրարան ժառանգող երեք քաղաքք պարտաւոր են իւրեանց յաջողութիւնն տեղական եւ յանկարծադէպ հանգամանաց: Մալէրն՝ իւր կլիմայի սուղացութեան եւ մի պատահալի, որ առաջնորդեց Կոստանային Աֆրիկացուն ի Մօն - Կալանօ: Բուլոյն՝ Իրենէրիուսի իւր հայրենեաց վերայ անսահման սէր ունենալուն, Փարիզ այն հանգամանաց, որ հաստատեց Աբէլարի եւ յետոյ Պետրոս Լամբարտացոյ բնականութիւնն իւր մէջ: Եթէ Անսելմ չստիպէր իւր Աբելարին թողուլ Լաօն քաղաքը, եւ եթէ Պետրոս յաջորդէր Աբէլարին ի Լաօն, ո՞վ գիտէ, որ այս քաղաքս փա-

(*) Այս Աստուծոյ դատաստանքն, չնայեցեալ իւր վնասալանձանքան, մի խուժաղութ սովորութիւն էր, որ պապերն էին հնարել. զոր օրինակ, մէկն հերետաճեալ էր ամբաստանվում, իւր անհղութիւնն ցոյց տալոյ համար ամբաստանեալն պիտի պառկէր մի ջեռուցեալ մեծ երկաթի վերայ. եթէ իւր մարմինն չայրուելով անկտանդ զուրս գար, անմեղ կ'ամբարտէր:

րիզու փոխան չէ՝ լինելու իմաստասիրութեան եւ լուկրատիկական աստուածաբանութեան աթոռախոսող։ Սակայն ստոյգ է որ փարիզու ձեռք բերած կարեւորութիւնն արքայախոս լինելու պատճառաւ՝ եւ կանոնիկոսականաց, վանականաց առնթիւր եղեալ հրաշափառ դպրոցը նպաստեցին ականաւոր եւ երեւելի անձանց զաւր եւ բնակելու անդ։

Երկր համալսարանը յայնժամ ծագումն առին՝ երբ ի բաց առեալ այդ քաղաքներում հաստատեալ հիմնական գիտութիւնը, ժողովուել էին մի եւ նոյն ժամանակ մի հոյ՝ ուսուցիչք՝ տեղեակք մարդկային որ եւ իղէ դիտութեան ճիւղերի միմեկն, որպէս զի ուսանողը կարող լինին ըստ իւրեանց բազմազան ճաշակաց եւ իւրեանց սահմանեալ կեանքի տեսակաց՝ մարդու յոյովակի դիտութեանց մէջ, այս ինքն երբ բաց ի բժշկականութիւնէ՝ ուսուցին ի Սալէրն փիլիսոփայութիւնն եւ իրաւագիտութիւնն, ի Բոլոյն իրաւանց հետ եւ ազատական արուեստը՝ աստուածաբանութիւնն եւ բժշկականութիւնն, ի Փարիզ աստուածաբանութեան եւ իրաւագիտութեան հետ՝ բժշկականութիւնն։ Այսպէս ուրեմն այս քաղաքաց ոչ մէկն ի սկզբան չուէր, ւստմն մի անմերի ընթացք, այնպէս որքին համալսարան անունն, որ նշանակէ մի հաստատութիւն, որ ուսուցանեն գիտութեանց բոլոր ճիւղերն, յայնժամ միայն հռովմէական օրինաց մտօք էին բւերնում, որ զուգակշիռ է մի ընկերական հաստատութեան։ Մի համալսարան այն ժամանակ կը տնւէր՝ եթէ կամ պոպից, կայսրից, կամ թագաւորից եւ կամ հանրապետութեան պետերից պարզեւելէր նմա մի առանձնաշնորհ, որոյ զօրութեամբ ժողովուրդ էին մի քանի քաղաքաց ուսուցիչք եւ ուսանողք, ի մի միաբանութիւն կամ առանձնաշնորհական ընկերութիւն, նախաժեռար քան զամենայն այլ միաբանութիւնս քաղաքային։ Գիտութեանց մի ընդհանրութեան եղանակ յետադոյն է, եւ այն բանն, որով արտայայտէին զնա, էր ստիպելու։

Իշխանք պարգեւելով դպրոցաց, առանձնաշնորհութիւնք եւ պահաւարք՝ շնանակեցին նոցա մայր գումար ի պահպանութիւն ուսուցչաց, սորա միայն վարձատրտոյց էին վնում, յունկնդաց, որք խումբ խումբ ածապարէին զալ յետագիւղ զովացուցանելոյ իւրեանց ուսման պատրն։ Երբ ի յետին ժամանակս հաղորդակցութիւն բացուեցաւ յով համալսարանաց մէջ, յայնժամ

միայն խորհրդակցեցին կոչել հռչակաւոր ուսուցիչներ՝ տաշարկելով նոցա մի որոշ ժամանակի ռոճիկ, որոյ զօրութեամբ պիտի հաստատէին իւրեանց բնակութիւնըն ի մի վայր։ Ֆրէտերիկ Բ․ Կոյսըն առաջինն եղեւ, որ խոստանալով մեծ շահեր՝ կարողացաւ ձգել ընդ ամենայն տեղեաց երեւելի գիտնականքն իւր ի 1224ին կանգնած Նէապոլսոյ համալսարանին մէջ։ Դարձեալ անագան ուրեմն, երբ ելլաղիոյ բնակիչք ապաստանեցան յիտալիա, քաղաքք՝ որոց բարեկեցութիւնն բազմապատկուի էր այն ժախուց առթիւ, որ ուսումնասէր երիտասարդութիւնն վառնում էր՝ անապարիցին ձգել ղէպ իւրեանց այդ գիտնականքը շահուտ պայմանօր։ Ի Փարիզ Ս․ Վիկտորի եւ այլ կանոնիկոսական եկեղեցեաց կալուածքն նպաստեցին աստուածաբանութեան վարդապետաց գիւրակեցութեան, վասն զի ունկնդիրք յարածամ անկարանում էին վճարել մեծ զրադիտական վարձք տոգմիկ երիտասարդաց նման, որք յաճախէին ի Բուլոյն յուսումն իրաւանց։ Մէն մի համալսարանի ակադէմիական ընկերութիւնն ինքնուրոյնաբար ընտրէր ուսուցիչներ երբ իւր ամպիոնը պարապ էին. պարգեւէր հասարակօրէն այն անձանց, որք Եօթմեայ շրջանէն զկնի (ըստ որում այս պայմանաւորման նշանակեալ էր) ունենային ի ձեռին այլ ինն ամաց պահանջելիք վկայութիւնն վարդապետութեան աստիճանին արժանի լինելոյ։

Սալէրնի համալսարանն՝ որ ամենահինն է՝ ծագումըն է առել յայդ քաղաքի եղեալ բժշկական դպրոցէ, զոյն դպրոցս պարտաւոր է իւր մեծանուն համբաւն Կոստանդին Կարբեղունացուն կամ Աֆրիկացուն։ Այս ականաւոր գիտնականս ի Բաղդադ 59 տարի ուսանելով Արաբացոց քերականական, բնական եւ ճշգրիտ գիտութիւնքն, զիմաւորաբար մատենական եւ բժշկականութիւնն՝ ապա ի 1060ին եկաւ քնսկի ի լուառն Կասէն, ուր նկրտից Ժանօթացնէր արեւմտեայն Իսլամիկատի՝ որպէս նա եւ Արաբացոց բժշկականութիւնն, որ անգիտելի էր Լատինացոց։ Վանուց մերձաւորութիւնն զրգոցք բազում հետաքրքրաց զնալ ի Սալէրն, ուր արդէն կազմուել էր մի տեսակ արաբական բժշկականութեան դպրոց Լոմբարդացոց ժամանակ։ Սիկիլիոյ վեհապետ Բոժթեր Ա․ հիմնեց Սալէրնի համալսարանն կցելով բժշկականութեան ուսուցչութեան հետ երկու այլ ուսուցչա-

կան ժողովր, մին՝ փրկստփայլածեան եւ միւսն իրաւագիտութեան: Ապէլքնի համալսարանն ծանօթ է եւրոպական ազանց մի դիէքեթիկ քաղաածօր աղաւաղեալ Ատոնի չափաբերականութեամբ, որ ի 4104 ամի յղեց առ գուքն Նորմանդիոյ Բօքէր, որ էր անդրանիկ որդի Գլյոմ Աշխարհակալի: Տեղեկակն է Միլանցի Ժան ուսուցիչն (տօկգօր): Ապէլքնի համալսարանն միւս երկու համալսարաններէն՝ որք ունէին մեծ բազմութիւն յաճախորդաց, սակաւ նպաստեց Եւրոպիոյ գիտութեանց յառաջադիմութեան:

Բուլոյնի համալսարանի ծագումն ճշգրտապէս ոչ կարեմք պատմել: անգստին իսկզբանէ, երբ յետալիս արուեստքն, վաճառականութիւնն եւ քաղաքաց հարստութիւնքն անցնին, մի աւելի խնստասիրական եւ կատարեալ օրէնսդրութեան կարեւորութիւնն զգալի եղաւ: Ընտրագոյն Տեւտոնական ազանց օրէնսդրութիւնից: Յայնժամ Բուլոյնացի իրենեքիւսն եղիւ վերածննդի հռովմէական իրաւանց, նկրտելով բացայայտել որոշակի եւ պարզ ձևով Հռովմէական խառանց մարմնի բոլոր մասունքն, այն յեղափոխութիւնն երկու տասներորդ դարու սկզբէն է, քանզի իրենեքիւսն գոնէ մինչ ի 4426 թիւն եւ գուցէ մինչ ի 4440 կենդանի էր: Նովա Բուլոյն հռչակուեցաւ որպէս առաջին եւ ամենաերեւելի դպրոցն իրաւանց: Ֆրէտէրիկ Ա. ի 4438 ամի ի ժողովն Բօնսալի կոչեց Բրնէրիուսի չորեքսին աշակերտքն եւ տուաւ համալսարանին բազում առանձնաշնորհս, որով ուսանողք ժառանգեցին մի ուրոյն ատեան եւ համարեցան որպէս զբազէտ կղերք: Գրատիէնի հրովարտակն ծնունդ տալով կառնական իրաւանց՝ Բուլոյնի ուսուցիչք այդ օրէնքը գրասեցին քաղաքական իրաւանց հետ: այնքան գեր ի վերոյ արմնացաւ իւրեանց ատեանն, որ ի 4200 ամի Բուլոյնում հաշուէին 40,000 ուսանողք: Ուսանողաց բնականքութիւնն քնտրէր իւր գատաւորքը, որոնց զվաււորն Բեկթօր (վարիկ) անունն կրէր: այս պաշտօնին հասանողք պիտի լինէին քսանհինգամեայ, ամուրի, եւ հինգ ամ պիտի ուսանէին իրաւագիտութիւնն իւրեանց յատուկ ծախքով, այդու ամենայնիւ ուսուցիչք եւ երբեմն եղեն Բէկթօր այլ եղանակաւ: Իւրաքանչիւր տարի փոխուէր Բէկթօրն եւ իւր յստիցամն քարծր էր արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց օստիցանից՝ ի բաց առնալ Բուլոյնին: Ուսուցիչք առհասարակ յոգեծրջուեալ էին Տօկգօր (ուսուցիչ) բանով, որ չէր մի

առանձին արժանաւորութիւն: յնթացս երկուտասներորդ դարու միայն Տօկգօր մականունն համարուեալ էր որպէս մի աստիճան, որ պարզուէին անասու եւ սատիկ փորձերից յետոյ՝ եւ որպէս մի իրաւունք ուսուցանելոյ եւ մասնակցելոյ գալոց աւագութեանց ամբարձման կամ մի նոր Տօկգօրի ընտրութեան մէջ:

Ֆրէտէրիկէն կոչեալ չորս ուսուցաց աշակերտքն ի Բօնսալի պատկառուեցան յերկուս կուսակցութիւնս, — զօգիակամ կամ Բիգօթիւս (պաշտպանք ուսուցչութեան) որք միայն զրուած օրէնքն ընդունէին, եւ թուշարակամ որք արդարակշռութեան համար մի քանի թողութիւնք տային: Երեքտասներորդ դարու ամենահռչակաւոր թուշարակամն Է Ֆրանսուայ Ակիօրս, որ առանձնացաւ իւր բոլոր մտախոհութիւնքն նուիրելու մի Գլօզի (մեկնութիւն) կամ քաղաքական իրաւանց մի մեթոդական ժողովածութեան՝ մեկնութեան խմբագրութեան: Իւր դպրոցն ծաղկեցաւ մինչ չորեք տասներորդ դարն, ուր մեծ Բադիօյ — Սաւօ — Ֆերասօ իրաւագիտաց արեգակն, ճշմարտութեան տէրն, կոչուաց առաջնորդն (իրեն տուած տիտղոսն այսպէս են) փոխեց ուսուցչութեան մեծողան եւ քրնադիրքն բացայայտելու փոխան մտքաւ իրաւադիտութեան մէջ սկոլաստիկական տրամաբանութիւնն եւ ստեղծեց իտալութեան բոլոր զինարանն:

Բադիօ Տեգլի իւ Բադի ֆերուզցին յաջորդեց նրմա:

Ոչ մի համալսարան այնքան գերազանց հռչակուեցաւ որպէս Բարիզու համալսարանն: Եթէ կամենանք նորա ծագումն նշանակել այն դպրոցներից, որ մեծն Աւերոլոս հաստատեց յաղագս ատողածաբանութեան եւ մարդկային հրահանգաց, որպէս զի նորան աւելի հմութիւն տանք, այդ կլինէր եղծանել մեր խօսքն: այդ դարեր մատուցած ծառայութիւնն 6 դար ժամանակամիջոց պետութեան, Եկեղեցւոյ, գիտութեանց, դպրութեանց եւ արուեստից բնականապէս ցիչ վկայք են իւր փառաց համբաւին: Պատահմունքն ստեղծեց Փարիզու համալսարանն, որ երկուտասներորդ դարում ժողովեց աստուածաբանական եւ իմաստասիրական հռչակաւոր ուսուցիչքն, ի թիւս որոց գտանուէր Պետրոս Լոմբարտացին ամենաերեւելին ի նոսա: այդ դպրոցը եղիւ համալսարան բառի իրական հասկացողութեամբ, երբ սկսեցին ուսուցա-

նկ իւր մէջ միւս գիտութիւնքն աստուածաբանութեան եւ իմաստասիրութեան հետ: Ի 1159 թի իւրաւադիտութիւնն ընդ աստուածաբանութեան սկսաւ ընթանալ, թէ եւ իսուն ինչ ժամանակ արտաքսուելով Փարիզից՝ նորէն մուտ գտաւ բժշկականութեան հետ եւ սկսեալ ի 1240 թուից չորեքին ուսուցչական ժողովքն կարգադրուեցան անդ:

Փարիզու համալսարանն իւր կազմութեամբ յատկութեամբ Բուլօյնից աստուել համբաւ ստացաւ. ի Փարիզ համալսարանական ընկերութիւնն բաղկացած էր յուսուցչաց, ուսանողք բնախն ստորադասեալք էին: Համալսարանն բաժանեալ էր յեօթն մարմնս. զորս էին երեք ուսուցչական ժողովք, այս ինքն աստուածաբանական, կանտոնական իրաւանց եւ բժշկական, եւ չորս ազգք՝ յորոց կազմութեամբ էր արուեստից ժողովքն, այս ինքն՝ փիլիսոփայութիւնն, որոյ անդամներէց ընտրուէր միշտ Բէկտօրն: Զորս ազգերն էին՝ Գաղղիացիք, Պիկարդացիք, Նորմանք եւ Անգղիացիք, յետոյ Գերմանացիք փոխանակեցին Անգղիացեաց:

Օրսփորի, Կամբրիճի համալսարանք՝ Փարիզու, Պաղուայի, Նէապօլսոյ, Բէճճիոյ, Հռովմայ եւ Տրէվիզիոյ՝ որ յիտալիա՝ համալսարանաց պէս հին են: Մօնտպէլիէ, Օրլէան, Թուլուզ ի Գաղղիա, Սալամանկ ի Սպանիա երեքտասաներորդ դարում հիմնուեցան:

Գերմանիան միայն չորեքտասաներորդ դարում ունեցաւ:

Թ. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԲԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՐԱՆՈՅՍ.

Անուբանալի ձշմարտութիւն է՝ զի իւրաքանչիւր ազգի մտաւորական եւ ուսումնական վիճակն կը կշռուի ինքնուրոյն մշակած գրականութեամբն:

Սա այնքան պարզ մի փաստ է՝ որքան ստոյգ եւ անհրեքելի է՝ որ իւրաքանչիւր արհեստաւորին համութիւն կը կշռուի

արհեստին վերաբերեալ գործիքներովն եւ նոքօք կգարծենայ արհեստագէտն:

Թէպէտ գրականութիւնը ընդհանուր առմամբ յիշելով՝ տակաւին շատ դժուար է գտնել մի ազգ՝ որ բարձր զարգացումն եւ մտաւորական մեծ արժանաւորութիւն ունենալով հանդերձ՝ նոցա համեմատ ես անթերի գրականութիւն ունենայ. վասն զի գրականութիւնն ունի հին եւ նոր մատենագրութեան երկու ծիւղեր, որք դարձեալ զանազան բաժանումնք կը կրեն, եւ կայ ազգ՝ որ ըստ հին մատենագրութեանց եւ պատմականին՝ բաւական հարուստ գրականութիւն ունի, կայ ազգ՝ որ բանաստեղծական եւ փիլիսոփայականին մէջ ձօխ է, կայ ազգ՝ որ նոր մատենագրութեամբք եւ բազմատեսակ զարգացած՝ եւ թարգմանութեամբք ընտիր քաղաածներ մթերած եւ ձօխացած գրականութիւն ունի, կայ ազգ՝ որ եւ ոչ մինը չունենալէ զատ՝ լիզու եւ գիր անգամ չունի թողումք յիշել թափառական ցեղերը: Ի սոցանէ պիտի հետեւի՝ որ եթէ գրականութիւնը իւր բոլոր եւ ընդարձակ նշանակութեամբ ըմբռնուի՝ շատ դժուար է մատնացոյց լինել մի այնպիսի ազգի վերայ՝ որ՝ նոյն իսկ ի ներկայ ժամանակիս՝ ըստ ամենայնիւ կատարեալ եւ մշակեալ գրականութիւն ունենայ:

Գոհութիւն Աստուծոյ՝ որ՝ Հայոց ազգիս՝ թէ եւ ոչ աւելի զարգացած եւ ձօխ սակայն եւ այնպէս գէթ միջնակարգ համարելի գրականութիւնը նկատելով, ոչ սակաւ սփոփանք կը գտնեմք, որ եւ ըստ բաւականին հրաշխաւորութիւն կհամարուի մի քանի գրական բաժանմունքներով Հայոց մտաւորական եւ ուսումնական վիճակին ոչ